«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

Մարզպետ՝ Հարություն Սարգսյանին

Երևան, Հայաստան

Սեպտեմբերի 22, 2016թ. № 01 / 221

ԴԻՄՈՒՄ

(տեղեկատվություն ձեռք բերելու վերաբերյալ)

Հարգելի պարոն Հարություն Սարգսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 27-րդ 2-րդ մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝
«Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.
1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը»:

Վերոնշյալ իրավական ակտերն հիմք ընդունելով,

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 4779
26 09 2016թ.

Խնդրում եմ՝

Տրամադրել տեղեկատվություն ՀՀ Վայոց Ձորի մարզի բյուջեից հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և հասարակական միավորումներին տրամադրված ֆինանսական աջակցության մասին՝ տեղեկատվության տրամադրման մեջ

Հայաստան | 0019 Երևան | Բաղրամյան 49, բն. 7 | Հեռ: +374 60 378989; +374 60 478989
Էլ-հասցե. newgenerationngngo@gmail.com | http://ngngo.net

հստակ նշելով՝

- Հասարակական կազմակերպությունների տվյալները, որոնց տրամադրվել է որևէ տեսակի ֆինանասական աջակցություն(անվանում, գրանցման վայր, ղեկավար անձի անուն ազգանուն):

- Ի՞նչ ծրագրերի շրջանակներում է տրամադրվել գումարները հասարակական կազմակերպություններին:

- Ո՞ր որոշումների հիման վրա են տրամադրվել հասարակական կազմակերպություններին ֆինանսական միջոցներ:

- Յուրաքանչյուր հասարակական կազմակերպությանը տրամադրված ֆինանսական միջոցների քանակական տվյալներ:

- ֆինանսական աջակցություն տրամադրելուց հետո կատարվել են մշտադիտարկումներ, թե ոչ, եթե այո ապա արձանագրվել են արդյոք խախտումներ :

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

Կատարեց՝ Ա. Մակարյան

+374 60 478989